ղեցի շրջակայ փոքրիկ գիւղացւոց, Զարխուի որէ 18 գերդաստուն, Փախրաքիւշի 12, Տուարիշէնի 11, Ղաջարի 22, Թալիշու 16, Գիւրջիլարու 13։ Սաղիանի գիւղումն կան երկու քահանայք, Տէր Խաչատուր և Տէր Խսահակ Յովհաննէսեանց, որոնք հովուումեն այն գիւղացւոց, և իրանց ժամերգութիւնն կատարումեն վանքի եկեղեցում։ Այս վանքն շատ յարմարութիւն ունի ամեն տեսակաւ ուսումնարանի և առաջնորդարանի։ Այստեղ լինելով միջակէտ գիւղացւոց վիճակին Զամախւոյ, առաջնորդն տեղւոյն շատ շուտ կարողէ այցելութեան ելանել իւր հօտին, և նոցա առանց նեղութեան հովւել և հոգևոր պիտոյքը հոգալ։ Այս վանքումն էլ շատ յարմար է կառուցանել գիշերօթիկ հոգևոր դպրոց, և նորա մէջ կրթել արժանաւոր քահանայացուք գիւղացւոց և քաղաքացւոց հովւելու համար։ Տեղւոյն օդն շատ առողջարար է, ունի վանքն մի ամենապատուական աղբիւր։ Ունի իրան շրջակայքում բաւական վարելահողեր, այգեստեղիք, և պարտիզատեղիք։ Այսոքիկ յարմարութիւնք շարժում են իմ սիրտը, որ Զամախու վիճակի առաջնորդարանը փոխադրեմ 'ի Սաղիան, նոյնպէս և հոգևոր դպրոցն, բայց աշխատում են ինձ խոչընդոտն լինել։

Այս վանքումն երեք օր մնացի շատ ուրախութեամբ և շատ տրտմութեամբ, ուրախութեամբ, որովհետև «վանք կասեն վարդապետի կեանք». տրտմութեամբ, որովհետև այդ վարդապետի կեանք սուրբ վանքը տեսի քայքայած և իսպառ նորոգութեան կարօտ։ Սիրելի ընթերցող, կարծես թէ այս սուրբ տաճարն ձեռներ տարածած ինձանից խնդրումէր, որ սիրելի ազգիս Հայոց յայտնեմ իրան ցաւերն և պիտանաւորութիւններն և նոցա հրաւիրեմ որ նորոգեն իրան, և առաջին փառաց հասցնեն իրանց փառաւորութեան և օգտի համար»։

Աղուանից աշխարհի պատմագիր Մովսէս Կաղանկատուացին Եղիշէ առաքելոյ յԱղուանս գալոյ համար այսպէս գրէ. (գլ. Զ. և Է. յերես 8—9։)

«Պատմութիւն ճշմարիտ առաւել քան զնախագահիցն Առանայ 'ի Վաղարշակայ՝ տանս Աղուանից՝ այլ ինչ ոչ գտաք մինչև ցքաջն Վաչական, որ միանգամայն տիրեաց կողմանս Աղ-